



## ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

### ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукиан 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia  
(+374 10) 55-06-02 (Tel./Fax), cs@ysu.am, [www.yasu.am](http://www.yasu.am)

### ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N°11

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ  
ԽՈՐՀՐԴԻ 24.11.2017 ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻՑ

### Օրակարգ`

1. Դեկանի հաշվետվություն
2. Ուսանողական հարցումների արդյունքների քննարկում

1-ին հարցի վերաբերյալ

**ԼՍԵՑԻՆ`** ԻԿՄ ֆակուլտետի դեկան **Վ. Դումանյանը** նշեց այն քայլերը, որ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է ֆակուլտետի զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման ողողությամբ. նշանակվել են բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի պատասխանատուներ, իրականացվել է առարկայական ծրագրերի թարմացումներ բակալավրիատում և մագիստրատուրայում, ընդլայնվել է համագործակցությունը ՏՏ ոլորտի կազմակերպությունների, մասնավորապես «Հայկական Ծրագրեր» ընկերության հետ, տպագրվել է երկու նոր դասագիրք, ամբիոնների կողմից իրականացվել է վերահսկողություն` ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների կրկնությունները, ինչպես նաև գրագողությունը բացառելու նպատակով, շարունակվել են աշխատանքները ծրագրավորման դպրոցական և ուսանողական օլիպիադաների կազմակերպման ողողությամբ:

Կարևորագույն փաստ է, որ ԻԿՄ ֆակուլտետի առաջին կուրսի ընդունելությունը աննախադեպ էր ուսանողների քանակով և մրցույթով: «Ինֆորմատիկա (համակարգչային գիտություններ)» մասնագիտության գծով ֆակուլտետ է ընդունվել 264 ուսանող, «Տեղեկատվական անվտանգություն» մասնագիտության գծով՝ 44 ուսանող: Ֆակուլտետը պետք է ամբողջովին օգտագործի իր հնարավորությունները ուսման որակը պահպանելու նպատակով: Մագիստրատուրայում ունենք 75 ուսանող, հեռակա ուսուցմամբ՝ 176 ուսանող: Կա առկա ուսուցման համակարգից հեռակա ուսուցման համակարգ ուսանողների տեղափոխության միտում: Հեռակա ուսուցման համակարգում կան հիմնախնդիրներ ուսման որակի հետ կապված:

Հաշվետու ժամանակաշրջանում բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտների քանակներն են համապատասխանաբար 136 և 16: Ֆակուլտետն ունի 7 ասպիրանտ, ֆակուլտետի խորհրդում պաշտպանվել է դոկտորական ատենախոսություն: Ֆակուլտետին հատկացված ասպիրատուրայի 2 տեղերը մնացին թափուր: Ֆակուլտետի աշխատակիցները ակտիվորեն մասնակցեցին CSIT միջազգային գիտաժողովի աշխատանքներին: Ակտիվ գործում է ՈԻԳԸ-ն:

Ֆակուլտետի համար լրջագույն խնդիրներ են լսարանների սակավությունը և ժամանակակից հաշվողական տեխնիկայով հագեցվածությունը: Տեխնիկան մի քանի տարվա ընթացքում բարոյապես հնանում է: Ծրագրավորման օլիմպիադաները դժվար է իրականացնել առկա տեխնիկայի միջոցով: Այդ խնդրի լուծման համար նպատակահարմար կլիներ ֆակուլտետին տրամադրել 40 համակարգիչներով հագեցած դահլիճ:

ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր **Ա. Գրիգորյանը** իր ելույթում նշեց, որ ծրագրավորման օլիմպիադայում ուսանողների հաջողությունը ֆակուլտետի հաջողությունն է: Ընդունելության արդյունքները բավական տպավորիչ են և այդ արդյունքները ձեռք են բերվել լուրջ մրցակցային պայմանների առկայությամբ:

Չնայած ֆակուլտետում փայլուն ուսանողների առկայությանը, նրանցից շատ քչերն են իրենց հետագա գործունեությունը կապում ֆակուլտետի հետ: Դասախոսական կազմի միջին տարիքը բավականին բարձր է:

Համալսարանի բյուջեի զգալի մասը ստացվում է ուսման վարձերից: Ուսանողների կարգապահությունը այս իմաստով բարձր մակարդակի վրա չէ: Մասնակի վճարման դեպքում թույլ է տրվել մասնակցել առաջին ընթացիկ քննություններին:

Պրոռեկտոր **Ա. Գրիգորյանը** առաջարկեց դեկանի աշխատանքը գնահատել դրական:

**Արտահայտվեցին՝** Ա. Չուբարյանը, Ժ. Մարգարյանը, Կ. Համբարձումյանը:  
**Որոշեցին՝** Դեկանի աշխատանքը գնահատել դրական:

## 2-ին հարցի վերաբերյալ

**Լսեցին՝** Գիտական խորհրդի քարտուղար Է. Դանոյանը ներկայացրեց 2016/2017 I և II կիսամյակների ուսանողական հարցումների արդյունքները և ուսանողների կողմից արված առաջարկները: Ուսանողական հարցումների ժամանակ արված հիմնական առաջարկություններն են.

- Արդիականացնել կրթական ծրագիրը, շեշտը դնելով տեղեկատվական տեխնոլոգիաների և ծրագրավորման վրա, ուսումնական ծրագրում ընդգրկել կամընտրական մասնագիտական առարկաներ,
- Համակարգչային լսարանները ապահովել ինտերնետով,
- Ծրագրավորման դասընթացների քննությունները անցկացնել համակարգիչների օգնությամբ,
- Գրադարանում ավելացնել անհրաժեշտ մասնագիտական գրքերի քանակը, ավելացնել հայերեն մասնագիտական գրականության ծավալը,
- Ավելի արդյունավետ օգտագործել համալսարանական էլեկտրոնային փոստը, բոլոր ծանուցումները և ուսանողին անհրաժեշտ տեղեկությունները ուսանողին փոխանցել էլեկտրոնային փոստի միջոցով,
- Վերանորոգել ֆակուլտետի մասնաշենքը, պատշաճ կահավորել լսարանները,
- Ֆակուլտետի մասնաշենքում հզորացնել Wi-Fi-ը:

**Որոշեցին՝** Ընդունել ի գիտություն:

Գիտական խորհրդի նախագահ

Վ. Դումանյան

Գիտական խորհրդի քարտուղար

Է. Դանոյան